

## ՍՐԵՄԻ ԵԼԱԿԻ ՑՈՒՑԵՐ

### ՆԿԱՐԻ ԶԲՐ

Զեռքերը ծալլած երկար ատեն գլխիկոր երազել, երազել յոդնա՞ծ, տխուր, ձանձրացած եւ բարախուն, սպասումի տենչերով . ապա քա-  
կել զանոնք, անունն ի վեր կարկառելու ու սպասել դարձեռով գլխիկոր, յոդնած, տխուր, ձանձրացած եւ բարախուն սպասումի տենչերով ...

Յանկարծ, կիսարաց պատուհանէ մը կը լսէք ջութակի մը լալ-  
կան. հիւանդ շեշտերը որ կը համապատասխանեն ձեր սպասումներուն, որ  
կուլան ձեզի պէս նուազկոտ ու հատած. . ապա նօխերգանքը կը վերս-  
կսի. ձայն մըն ալ կը խառնուի անոր մեղմօրէն, թոյլ տրտմութիւն մը  
կը զզար որ սակայն լաւազոյն հանգիստն է տառապող հոգիին համար. կ'ունկնդրէք անոր, գրիթէ թարկացած, զդալով եւ հատնելով գեր սպոյն  
զզայնու թեան մը ներշնչումներուն մէջ ...

Սովեզրն ի վեր լոյս ժպիտով աղայ մը կը յառաջանայ յամրաբար,  
հազ/ւ քսան տարեկան ։ Զդաձիք ու անհանդիստ կ'երեւի, Մելամաղ-  
ձու նէման է այդ աղուոր տղան, որ մեղեդիին կ'ունկնդրէ, զուցէ զբա-  
նելու համար բուժումը իր վիշտերուն . սպասումի անձկոտ այս վայր  
կեաններուն մէջ :

Բայց, ի զո՞ւր, սիրելիին՝ զոր անգամմը միայն տեսաւ, չերեւիր. շե-  
րեւիր բնա՛ւ, Զգացումի հետափնդումովը յամառ. կաշկանդուած ան-  
ծանօթին գերոզ հմայ, ներէն նոյն անհամբեր շարժուձեւերը կը կրկ-  
նէր, տարտամ երեւ ակայութեամբ մը դինովցած :

Վայրիկենապէս յլացուած երկու միջոց կայ ա՛լ հանգիստ ոլլալու .  
մոռնալ զայն եւ լայ նուազի անոյշ ողբերով. կամ մոռնար կեանքը, ծո-  
վուն կանանչ կոհակներուն մէջ . . ո՞րը երկուքէն . .

• •

Արուեստագէտի նուրբ ճաշակը լիապէս յագեցած էր անկէ. այն  
նուրբ ու ճապուկ հասակէն որ օրօրուելով կը շրջագայէր այդ իրիկուն  
ծովափին մօտ. Ըեր նակ նաւակէ մը դուրս ելած. . . Արեւելեան երան-  
գապնակի մը ամբողջ վառ համադրութիւնը պարպուած էր վրան եւ  
պաշտելի կ սպոյտ մը լճացած էր թաց սշբերուն ետին : Հովէն զող-  
ցուան նուրբ շղարշն ալ անոր մերկութեան անդիմադրելի հմայթը կը  
ցուբագրէր, որուն առջեւ նկարիչը դողաց, եւ զայն սիրելու պէս հր-  
անդ ըլլալ զդաց :

Անիմանալի զորութիւն մը գեպի ի առաջ մղեց զի՞նքը . վայրեւ համար երանութիւնը երկինքէն զրկուած այդ հուրին . բայց բայց երբ կեցան . կրակ մը կ'այրէր իր սիրար ու խարոյկ մը սորերը . . .

Սովը նոյն պահուն չէր շառաչեր . ույժը նորն ատեն չէր շնչեր եր . կինքը նոյն պահուն զոյն չունէր . այսպէս երեւցաւ նէմային, որ լուսային աշխարհ մը փոխադրուած ըլլալ կը զգար . ուր կը թաղուէր ճառագայթներու իրար անցած ծիրանի ցոլքերուն մէջ . . .

Այս բարակ մարմինէն կր ծորէր ա'յգքան շնորհ ու գեղ, ա'յգքան կախարդանք . . . երկնային կեանքի շօշափելի մէկ պատկերն էր անիկա զոր երբեք կրցած րըւալ որանաւ բանաստեղծին երեւակայութիւնը . իր անենէն վաս թափանցուներուն մէջն իսկ և Ապային ատուպի մը կեանքը ունեցաւ անոր երեւումը . ամէն գեղեցիկ բաներու պէտ . ճերմակ նաւակը քշեց տարաւ վայն եզերքէն . ու նկարիչը մեաց հոն տիսուր . թեւերը ծայլած մինչեւ որ հորիոնէն անդին անհետ եղաւ ան Դ.

Ո՞չ մէկ ծայլք կր գծուէր գէմքին վրայ . աչքերը կիսախոսւփ . իրենց երկար ու վեր զարձած թարթիչներուն մէջէն նայուածքի նուազում մը կը սահեցնէին . Ատիկա քաղցրութիւն մըն էր համակ : Իր կարմիր բերանը, գոյց կր միար կոկոնի մը պէտ չանիծերու համար թերեւա սահզողը որ իրեն թեւեր չէր տուած . . . :

Իրինապահը սքանչելի էր . արեւմուաքը ոսկեզօծուած . երկինքն սիրուն երամներ կը սահէին, ջուրին մէջ վտառներ լոյսը միջոցին մէջ կ'ոզեւարէր, խարակներուն ցից գլուխները ժպիտ մը ունէրն . տիեզերքի մէջ ամէն իր կը խնդար հանգչած . միայն նկարիչը հանդիսաւ չունէր և կուլար ձեռքերը ծալլած երկար տահն . գլխիկոր, սպասումի տենգերով . . . :

Վերադարձը անտանելի եղաւ :

\* \*

Նկարիչը ուսանող մըն էր գեռ . ու յաջորդ առառուան համար մըրցուս կար իր ընկերներուն հետ . լաւագոյն պատկերը հեղինակողին վայլուն ապագայի մը խոստամով : Աւաշը . որ ծովալին զոհած էր իր ժամանակէն մեծ մաս մը . յաջորդ որը ձեռնունայն պիտի մնար զըպրոցին մէջ . հաղիւ քանի մը արագոստահ ժամեր կային ևս դեռ իր շինելիք նկարին մոտափարն անզամ չունէր . ծաք գլխով մը յանկարծ այս բանը մտածեց . երանզապնակը ձեռք առաւ, ապա մտաները անոր վրայ գտնուած ներկերուն հետ խաղացին, տեսակ մը ջզագութեամբ : Երանզներու մէջ հալած, հանգրիծուած շղարշներու պէս փափոկ, իր ամբողջ երեւակայութիւնն էր ատրկա, իր սէրը թերեւա, նաւակին աղջիկը կեանք առած էր իրանզապնակին վրայ, գոյներուն ներզաշնակ իրարանցութերուն մէջն, ա'յնքան ազուոր . . . :

Ու, առոտապանքի, յուսահատութեան մէկ պահը ներշնչումի զերազանցող գլուխ-գործոց մը ստեղծեց . . . :

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅՑ Մ.